# 1.10. ՆՈՐՎԵԳԻԱՅԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

**ՍՏԵՓԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ**
**13.07.2021-13.09.2021**

**Ներածություն:** ՀՀ տնտեսության զարգացման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի զարգացած երկրների տարբեր ոլորտներին վերաբերող հաջողված քաղաքականությունների և համապատասխան գործիքակազմի ուսումնասիրությունը: Նորվեգիան կախյալ տարածքից վերածվել է ժողովրդավարական ինքնիշխան պետության, և հումքը կարևոր դեր է խաղացել նրա՝ որպես աշխարհի ամենազարգացած երկրներից մեկի ձևավորման գործում[1], սակայն նա իր էներգետիկ անվտանգությունը կառուցել է վերականգնվող էներգետիկայի վրա[2]:

Նորվեգիան առատաձեռն և համընդհանուր սոցիալ-դեմոկրատական բարեկեցության պետության օրինակ է, որը բնութագրվում է կյանքի որակի, սոցիալական վստահության բարձր մակարդակով և աղքատության ցածր մակարդակով[3]: 1980-ական թթ. ածխաջրածինների արտահանման միջոցով Նորվեգիայի ստացած զգալի ֆինանսական միջոցները օգտագործվել են բնակչության կյանքի որակը բարելավելու և ենթակառուցվածքների զարգացման համար, մինչ օրս ապահովել են բնակչության բարձր կենսամակարդակ և Նորվեգիան դարձրել աշխարհի ամենահարուստ երկրներից մեկը: Արդյունքում 2018 թ. Մարդկային զարգացման ինդեքսով թագավորությունն աշխարհում առաջին տեղն է զբաղեցրել[4]: Ստեղծվել է բնական ռեսուրսների կառավարման բարձր արդյունավետ համակարգ[5]: Երկրի էլեկտրաէներգիայի կարիքները հիմնականում բավարարվում են հիդրոէներգիայով, իսկ նավթն ու գազը հիմնականում արտահանվում են Եվրոպա (բնական գազի ավելի

---

[1] Талагаева Д.А., Тращенко А.А., Роль нефтяных ресурсов Северного моря в экономике Норвегии // Вестник МГИМО Университета. 2015. № 4 (43), с. 264.

[2] Сумин А.М., Энергетическая политика Норвегии. Часть 1. Концепция энергетической безопасности // Актуальные проблемы нефти и газа. 2020. Вып. 1(28). статья 9, https://doi.org/10.29222/ipng.2078-5712.2020-28.art9

[3] Аристов Е.В., Социальность государства в Норвегии // Наука и образование: хозяйство и экономика; предпринимательство; право и управление. 2016. № 1 (68), с. 73.

[4] Сумин А.М., Энергетическая политика Норвегии. Часть 2. Нефтегазовый сектор. Дихотомия норвежской энергетической политики. Российско-норвежское энергетическое сотрудничество // Актуальные проблемы нефти и газа. 2020. Вып. 1(28). статья 10, с. 2, 15, https://doi.org/10.29222/ipng.2078-5712.2020-28.art10

[5] Аналитический центр при правительстве российской федерации. Бюллетень о текущих тенденциях мировой экономики N 51: Норвегия: ресурсная модель экономического роста развитой страны, декабрь 2019. с. 10. [Электронный ресурс]. https://ac.gov.ru/files/publication/a/26496.pdf (дата обращения: 27.09.2021).

քան 95 %-ը և Նորվեգիայում արտադրվող նավթի ավելի քան 75 %-ը արտահանվում է): Թագավորությունը նավթի և բնական գազի համաշխարհային խոշորագույն արտահանողների թվում է՝ 2018 թ. դրությամբ զբաղեցնելով իններորդ (նավթամթերքների զուտ արտահանման ծավալով) և երրորդ տեղը համապատասխանաբար, իսկ 2017 թ. Նորվեգիան առաջ էր անցել Քաթարից բնական գազի արտահանման ծավալով և այդ ցուցանիշով երկրորդ տեղն էր զբաղեցրել աշխարհում՝ առաջ թողնելով միայն Ռուսաստանին[1]:

Թեպետ երկիրը հասել է ներդաշնակ հավասարակշռության շուկայական մեխանիզմների և կառավարության կարգավորման միջև, սակայն տնտեսության արտահանման վրա հիմնված մոդելը լիովին հուսալի չէ. գիտության և նորարարության բարձր ծախսերի հաշվին թեև դանդաղ, բայց փորձում են դիվերսիֆիկացնել այդ մոդելը[2]: Նորվեգիայում ՓՄՁ-ների մրցունակ նորարարական զարգացման մոդելը հիմնված է նավթի և գազի արդյունահանման բարձր եկամուտների օգտագործման վրա, որոնք ուղղված էին երկրի կողմից նորարարական մշակումների խթանմանը և համալսարաններում և հետազոտական կենտրոններում հետազոտական գործունեության աջակցմանը[3]:

**Արդիականությունը:** Հանդես գալով որպես նավթի և գազի խոշոր արտահանողներից մեկը՝ Նորվեգիան կարողացավ արտահանումից ստացվող գումարները ուղղել զարգացած երկրի վերածվելու նպատակին՝ միևնույն ժամանակ էներգետիկ անվտանգության տեսանկյունից առաջնայնությունը տալով վերականգնվող էներգետիկային: Տնտեսության այդպիսի վերափոխումն ու դրանում էներգետիկ քաղաքականության և հատկապես վերականգնվող էներգետիկայի ուսումնասիրությունը պայմանավորում են հոդվածի արդիականությունը:

**Նպատակը:** Հոդվածի նպատակն է՝ դիտարկելով Նորվերգիայի տնտեսական զարգացման ուղին, քաղաքականությունը արդյունահանող ընկերությունների նկատմամբ և երկրի էներգետիկ անվտանգության քաղաքականությունը՝ առաջարկել համապատասխան քայլեր ՀՀ էներգետիկ անվտանգության աստիճանի բարձրացման ուղղությամբ:

**Խնդիրները:** Նպատակին հասնելու համար դրվել են **հետևյալ խնդիրները.**

- ներկայացնել նավթի և գազի արտահանումից ստացված միջոցների հաշվին Նորվեգիայի զարգացման ուղին, բնակչության կենսամակարդակի

---

[1] Сумин А.М., Энергетическая политика Норвегии. Часть 2. Нефтегазовый сектор. Дихотомия норвежской энергетической политики. Российско-норвежское энергетическое сотрудничество // Актуальные проблемы нефти и газа. 2020. Вып. 1(28). статья 10. с.2. https://doi.org/10.29222/ipng.2078-5712.2020-28.art10

[2] Беляев С.А., Модель экономического развития Норвегии как пример эффективного управления ресурсами страны // Региональный вестник. 2019, № 4 (19), с. 33.

[3] Такмашева И.В., Тяглов С.Г., Инновационное развитие предпринимательского сектора: опыт скандинавских стран // Современная Европа. 2019, № 4 (90), с. 63.

բարձրացմանն ուղղված միջոցառումները և պետական քաղաքականությունը արդյունահանող ընկերությունների նկատմամբ,

- ներկայացնել Նորվեգիայի էներգետիկ անվտանգության քաղաքականությունը,
- առաջարկել ու հիմնավորել համապատասխան քայլեր ՀՀ-ում էներգետիկ անվտանգության բարձրացման ուղղությամբ:

**Գրականության ակնարկ:** Ե. Արիստովը[1] իր աշխատությունում նշում է, որ հետազոտողները դեռևս համաձայնության չեն եկել այն հարցում, թե սոցիալական պետության որ մոդելին կարող է վերագրվել Նորվեգիայի բարեկեցության պետությունը, և ներկայացնում է այդ տեսակետները, համաձայն որոնց՝ Նորվեգիան պատկանում է՝

1. ինստիտուցիոնալ, սոցիալ-դեմոկրատական կամ սկանդինավյան մոդելին, որի դեպքում այն բնութագրվում է հետևյալ հատկանիշներով. սոցիալական ապահովության համընդհանուր համակարգերի ներդրում, բնակչության կարիքների համապարփակ ընդգրկվածություն, բարիքների վերաբաշխման զգալի աստիճան, բնակչության զբաղվածության բարձր մակարդակ, աշխատաշուկայի կարգավորման նպատմամբ զբաղվածության ակտիվ քաղաքականության իրականացում,

2. հիբրիդային բարեկեցության պետության մոդելին, որի դեպքում այն միաժամանակ մի քանի մոդելների հատկանիշներով է բնութագրվում՝ բարեկեցության սկանդինավյան, ինչպես նաև անգլո-սաքսոնական: Միևնույն ժամանակ պետության կողմից տրամադրվող սոցիալական աջակցության չափերը որոշակիորեն փոքր են սկանդինավյան բարեկեցության այլ պետությունների համեմատությամբ, ինչը Նորվեգիային որոշ չափով մոտեցնում է անգլո-սաքսոնական մոդելին, ինչպես նաև այդ երկրի սոցիալական ապահովության համակարգի այլ բնութագրիչները,

3. առանձին պետության նորվեգական մոդելին՝ հաշվի առնելով Նորվեգիայում սոցիալականության սահմանադրական սկզբունքի իրականացման հատուկ առանձնահատկությունները:

Դ. Տալագաևան և Ա. Տրաշչենկոն նկարագրում են նավթարդյունաբերության ձևավորման պատմությունը՝ ներառյալ առկա հանքավայրերի և խողովակաշարերի մանրամասն վերլուծությունը, և ներկայացնում են Հյուսիսային ծովում նավթի արդյունահանումից պետության եկամուտների գնահատականը[2]:

Ա. Սումինը իր 2 աշխատություններում վերլուծում է Նորվեգիայի էներգետիկ քաղաքականության հիմքում ընկած էներգետիկ անվտանգության

---

[1] Аристов Е.В., Социальность государства в Норвегии // Наука и образование: хозяйство и экономика; предпринимательство; право и управление. 2016, № 1 (68), с. 73.

[2] Талагаева Д.А., Тращенко А.А., Роль нефтяных ресурсов Северного Моря в экономике Норвегии // Вестник МГИМО-Университета. 2015, № 4 (43), с. 263-270.

ազգային հայեցակարգը, բնութագրում է վերականգնվող էներգետիկայի ոլորտը և նրա դերը թագավորության էներգետիկ անվտանգության ապահովման գործում, ինչպես նաև վերլուծում է նորվեգական էներգետիկ ոլորտի առջև ծառացած մարտահրավերները գլոբալացման համատեքստում[1]:

Ի. Տակմաշևան և Ս. Տյագլովը, վերլուծելով Սկանդինավյան երկրների նորարարությունների քաղաքականությունը փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) զարգացման գործում, մատնանշել են պետական մասնակցության բարձր մակարդակը Սկանդինավյան երկրներում ազգային ինովացիոն համակարգերի ինովացիոն հիմքերի ձևավորման գործում՝ փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման նպատակով, իսկ Նորվեգիայի դեպքում երկրի մոդելը ներկայացրել են որպես նավթի և գազի արդյունահանման եկամուտների օգտագործման հիման վրա ՓՄՁ-ների մրցունակ նորարարական զարգացման մոդել[2]:

**Մեթոդաբանություն:** Ուսումնասիրության հիմնական արդյունքների վերաբերյալ եզրահանգումներ կատարելիս կիրառվել են վերլուծական-սինթետիկ մեթոդները:

**Վերլուծություն:** Մինչև 1950 թ. տնտեսության զարգացումը կարելի էր բնութագրել 3 իրար հաջորդած և փոխկապակցված գործընթացներով[3]: Ափի երկայնքով արտահանումից ստացվող եկամուտները (ձկնորսություն և ձկնեղեն) նպաստեցին տնային տնտեսությունների բարեկեցության բարելավմանը 1900-1950 թթ., իսկ նոր զարգացող արդյունաբերական քաղաքներում արտահանման վրա հիմնված արդյունաբերական տնտեսական աճ (ծանր արդյունաբերություն, հիդրոէներգետիկա, քիմիկատներ՝ պարարտանյութեր, և այլն) արձանագրվեց 1890-1920 թթ. ժամանակահատվածում[4]: Գյուղական վայրերում ներմուծման-փոխարինման մշակող արդյունաբերության ոլորտները (կահույքի, հագուստի, սննդամթերքի արտադրություն, ձկնորսության և գյուղատնտեսության համար նախատեսված սարքավորումներ, էլեկտրական պարագաների արտադրություն և այլն) նպաստեցին զբաղվածների թվաքանակի, ինչպես նաև տարածաշրջանային և երկրի տնտեսության աճին 1920-ական թվականներից սկսած, երբ մինչ այդ արագ աճի տեմպեր գրան-

---

[1] Сумин А.М., Энергетическая политика Норвегии. Часть 1. Концепция энергетической безопасности // Актуальные проблемы нефти и газа. 2020. Вып. 1(28), с. 9. https://doi.org/10.29222/ipng.2078-5712.2020-28.art9. Сумин А.М., Энергетическая политика Норвегии. Часть 2. Нефтегазовый сектор. Дихотомия норвежской энергетической политики. Российско-норвежское энергетическое сотрудничество // Актуальные проблемы нефти и газа. 2020. Вып. 1(28), с. 10, https://doi.org/10.29222/ipng.2078-5712.2020-28.art10

[2] Такмашева И.В., Тяглов С.Г., Инновационное развитие предпринимательского сектора: опыт скандинавских стран // Современная Европа. 2019, № 4 (90), с. 60, 62-66.

[3] Nilsen, R. (2014). Rural modernisation as national development: The Norwegian case 1900–1950, Norsk Geografisk Tidsskrift - Norwegian Journal of Geography, 68:1, p.57, DOI: 10.1080/00291951.2013.870598

[4] Տե՛ս նույն տեղում:

ցած արտահանող ոլորտներում աճի տեմպերը դանդաղեցին[1]: Նորվեգիայի վերափոխման հաջողության մեկ ակնհայտ գործոն է հանդես եկել տնտեսության արդիականացման գործընթացը, որում ներմուծման-փոխարինման մշակող արդյունաբերության ոլորտները հանդես եկան որպես ազգային տնտեսության «վերափոխման շարժիչ ուժ»՝ ի հավելումն արտահանմանը միտված հիդրոէներգետիկայի հիմքով պարարտանյութերի և մետաղների մշակման ոլորտների 1920 թվականից մինչև 1950 թ.[2]: Այսպիսով՝ մինչև 20-րդ դարի կեսերը Նորվեգիայի եկամտի աղբյուրները շատ սահմանափակ էին, և դրանք ներառում էին ձկնորսությունը, նավագնացությունը, գունավոր մետալուրգիան և հիդրոէներգետիկան[3]:

Այնուամենայնիվ, հաշվի առնելով անկախության ուշ ձեռքբերումը, տնտեսական գործունեության իրականացման ավանդույթների բացակայությունը, քիչ բնակչությունը և այլ գործոններ, երկրի հումքային ռեսուրսները գրեթե ամբողջությամբ գտնվում էին օտարերկրյա ընկերությունների տրամադրության տակ: Ամեն ինչ փոխվեց նավթի առաջին հանքավայրի՝ Էկոֆիսկի հայտնագործմամբ[4]: Հյուսիսային ծովում նավթի արդյունահանման պատմությունը սկսվում է սահմանների հստակեցմամբ՝ որպես սուվերեն երկրների սահմանների. արդեն 1970 թ. Հյուսիսային ծով ելք ունեցող երկրները որոշեցին իրենց տնտեսական գործունեության սահմանները, և Մեծ Բրիտանիայի հետ սահմանները կարգավորելուց անմիջապես հետո Նորվեգիան բացեց նավթի արդյունահանման ոլորտը օտարերկրյա ընկերությունների համար՝ ներդրումների ներհոսքին զուգահեռ նոր տեխնոլոգիաների փոխանցումով[5]: 1963 թ. ընդունվեց հրամանագիր, որով «Կոնցեսիաների մասին» օրենքը տարածվեց նավթի արդյունահանման ոլորտի վրա, և արդյունքում արտասահմանյան ընկերություններն իրավունք ստացան տնտեսական գործունեություն ծավալել 6 տարի ժամկետով, մինչդեռ Նորվեգիայի կառավարությունն իրավունք ուներ միջամտել այդ գործընթացին (շահագործման ժամկետը կարող էր ավելացվել ևս 40 տարով, բայց մի շարք սահմանափակումների առկայությամբ)[6]: Այն երաշխավորեց արտասահմանյան ընկերությունների մասնակցությունը նավթի արդյունահանմանը՝ միաժամանակ պահպանելով երկրի ինքնիշխանությունը ռեսուրսների նկատմամբ, և երբ բրիտանական Philips-ը 1969 թ. հայտնաբերեց Էկոֆիսկի հանքավայրը, նորվեգական «Norsk Hydro»-ն ստացավ նավթահանքի 6.7%-ը (700 մլն մ³): Բայց հսկա դաշտի մասշտաբով նույնիսկ փոքր տոկոսը մեծ շահույթ բերեց Նորվե-

---

[1] Տե՛ս նույն տեղում:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Талагаева Д.А., Тращенко А.А., Роль нефтяных ресурсов Северного Моря в экономике Норвегии // Вестник МГИМО-Университета. 2015, № 4 (43), с. 264.

[4] Տե՛ս նույն տեղում:

[5] Տե՛ս նույն տեղում:

[6] Տե՛ս նույն տեղում:

գիային և ցանկություն առաջացրեց ինքնուրույն նոր հանքավայրեր շահագործելու: Շուտով հայտնաբերվեցին Ֆրիգ, Ստատֆյորդ, Սնորեր, Տրոլ դաշտերը՝ հանքավայրեր, որտեղ Նորվեգիան անմիջապես իրեն ապահովեց հիմնական օպերատորի դերը[1]: Տնտեսության ազգային հատվածի ամրապնդման այս անցումը տեղի ունեցավ Աշխատավորական կուսակցության իշխանության գալուց հետո, որը 1971 թ. որոշեց նավթային ձեռնարկությունների 50 %-ը պահել որպես պետական սեփականություն, և այդ ծրագիրն իրականացնելու համար 1972 թ. հունիսի 14-ին ստեղծվեց պետական «Statoil»-ը (ներկայումս՝ «Equinor»), որն էլ հիմք դրեց պետական սեփականության պրակտիկային ոչ միայն իր բնագավառում, այլև տրանսպորտային ցանցերի՝ խողովակաշարերի դեպքում[2]: «Brent» տեսակի նավթի ծավալն ու բարձր որակը երկրին, որպես բաժնետոմսերի 54 %-ի սեփականատիրոջ, հնարավորություն ընձեռեց ազդել նավթի գների վրա[3]:

«Statoil»-ի զարգացման հաջորդ քայլը Statfjord-ում «Mobil» ընկերության բաժնետոմսերի ձեռքբերումն է, որի արդյունքում բրիտանական ընկերությունից պատրաստի տեխնոլոգիաների ստացումը հնարավորություն տվեց արագացնել Նորվեգիայի տեխնոլոգիական զարգացումը, և շուտով «Statoil»-ը դարձավ Gullfaks դաշտի սեփականատերը[4]: Արդյունքում Նորվեգիան ուներ իր նավթահանքերը Հյուսիսային ծովում, 1979 թվականից զբաղվում է փոխադրումների արդյունավետության բարձրացման խնդրով՝ իրականացնելով բոլոր ինժեներական և օպերատորական աշխատանքները, և երկիրը կարողացավ ամրապնդել իր դիրքերը նավթի փոխադրման ոլորտում:[5]

Ներկայումս նավթային բումի նոր փուլ է սկսվում նաև Հյուսիսային ծովում՝ շահագործելու նոր խոշոր հանքավայրը՝ Յոհան Սվերդրուպը, և փորձագետների կարծիքով, հանքավայրի պաշարները կբավարարեն 50 տարի ու կարող են Նորվեգիային բերել մոտ 100 միլիարդ դոլար, մինչդեռ նավթային ընկերությունները, իշխանությունների առաջարկով, շարունակում են ներդրումներ կատարել երկրի մայրցամաքային հատվածում գտնվող հանքավայրերի մեջ, իսկ «Bloomberg» գործակալության տվյալներով՝ մինչև 2022 թ. ընկած ժամանակահատվածում ռեսուրսային ընկերությունները պատրաստ են ներդնել մինչև 20 միլիարդ դոլար միայն նորվեգական ծովային նավթահանքերի զարգացման համար[6]:

---

[1] Տե՛ս նույն տեղում:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Талагаева Д.А., Тращенко А.А., Роль нефтяных ресурсов Северного Моря в экономике Норвегии // Вестник МГИМО-Университета. 2015, № 4 (43), с. 264.

[5] Տե՛ս նույն տեղում, էջ 264-265:

[6] Сумин А.М., Энергетическая политика Норвегии. Часть 2. Нефтегазовый сектор. Дихотомия норвежской энергетической политики. Российско-норвежское энергетическое сотрудничество //

Բնական գազը, որի արդյունահանումը Հյուսիսային ծովի շելֆում սկսվել է 1977թվականից, ներկայումս կազմում է համաշխարհային էներգետիկ կարիքների 22 %-ը, և դրա նշանակությունը, որպես էներգակրի, տարեցտարի ավելանում է: Նորվեգական գազի արդյունահանման ռեսուրսային բազան, ինչպես և նավթի արդյունահանման դեպքում, Հյուսիսային, Նորվեգական և Բարենցի ծովերի հանքավայրերն են, և փորձագետների հաշվարկներով՝ ներկայում այն սպառել է հետախուզված և ենթադրյալ գազային հանքավայրերը մոտավորապես 1/3-ով[1]:

Երկրի բոլոր էներգետիկ ռեսուրսների նկատմամբ վերահսկողության պատասխանատվությունը կրում է նավթի և էներգետիկայի նախարարությունը, իսկ նրա վերահսկողության տակ գտնվող կառույցը՝ Նորվեգիայի նավթի տնօրինությունը, կառավարում է մայրցամաքային շելֆի ռեսուրսները և ծրագրեր է կազմում ոլորտի հետագա զարգացման համար: 2015 թ. պետությունը տնօրինում էր երկրի ամբողջ նավթի և գազի 49 %-ը[2]: Բացի «Statoil»-ից, պետությանը պատկանում էր «Statoil»-ի դուստր ձեռնարկությունը՝ «Petoro»-ն, որի միակ սեփականատերը պետությունն է և որպես հիմնական ֆինանսական ընկերություն՝ վերահսկողություն է իրականացնում այլ հանքավայրերի օպերատորների գործունեության նկատմամբ [3]:

Նորվեգիայում տնտեսության ռազմավարական ոլորտներում պետության ներկայությունը ավանդաբար մեծ է և վերաբերում է ոչ միայն ռեսուրսային հատվածին, որտեղ պետությունն իրականում հանդիսանում է ինչպես բաժնետեր, այնպես էլ մասնակցում է նավթի ու բնական գազի արդյունահանմանը[4]: Մասնավորապես՝ պետությանն են պատկանում է Օսլոյի բորսայի բաժնետոմսերի մեկ երրորդը, ինչպես նաև նշանակալի մասնակցություն ունի երկրի խոշորագույն մի շարք ընկերությունների կանոնադրական կապիտալում, ինչպիսիք են հեռահաղորդակցության օպերատոր «Telenor»-ը, երկրի հիմնական ալյումին արտադրող «Norsk Hydro»-ն, հանքային պարարտանյութերի խոշոր արտադրող «Yara»-ն և նորվեգական ամենակարևոր «DNB» բանկը[5]: Ընկերությունը նաև վերահսկում է էլեկտրաէներգիա արտադրող «Statkraft»-ը, որը նույնիսկ գրանցված չէ ֆոնդային բորսայում: Եթե Նորվեգիայի կառավարությունը որոշի թույլ տալ արտասահմանյան կապիտալի

---

Актуальные проблемы нефти и газа. 2020. Вып. 1(28), статья 10, с.18. https://doi.org/10.29222/ipng.2078-5712.2020-28.art10

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 9-11:

[2] Талагаева Д.А., Тращенко А.А., Роль нефтяных ресурсов Северного Моря в экономике Норвегии // Вестник МГИМО-Университета. 2015, № 4 (43), с. 267.

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Сумин А.М., Энергетическая политика Норвегии. Часть 2. Нефтегазовый сектор. Дихотомия норвежской энергетической политики. Российско-норвежское энергетическое сотрудничество // Актуальные проблемы нефти и газа. 2020. Вып. 1(28), статья 10, с.18. https://doi.org/10.29222/ipng.2078-5712.2020-28.art10

[5] Տե՛ս նույն տեղում:

մուտքը երկրի տնտեսություն, ապա դա վերաբերվում է միայն ոչ ռազմավարական նշանակություն ունեցող տնտեսության ոլորտներին (2016 թ. չինական ընկերության կողմից նորվեգական «Opera»-ի առքը)[1]:

Նորվեգիայում գիտակցեցին նաև բարենպաստ տնտեսական պայմանների ընթացքում ստացված եկամուտների պահպանման և ավելացման անհրաժեշտությունը, որի արդյունքում առաջացավ Նավթային ներդրումային հիմնադրամի գաղափարը՝ ածխաջրածինների արտահանումից միջոցներ կուտակելու և զարգացած երկրների պետական պարտատոմսերում և աշխարհի ամենակայուն կորպորացիաների բաժնետոմսերում դրանք ներդնելու նպատակով[2]: 1990 թ. ստեղծվեց և սկսեց գործել Նավթային հիմնադրամը, որի նպատակն էր կառավարել և ավելացնել ածխաջրածինների արտահանումից եկամուտները՝ ի շահ նորվեգացիների ապագա սերունդների[3]: Նորվեգիայի կենսաթոշակային պետական հիմնադրամը ստեղծվել էր 1994 թ.[4]: 2006 թ. 2 հիմնադրամները՝ Պետական կենսաթոշակային հիմնադրամը և Նավթային հիմնադրամը, միավորվեցին Նորվեգիայի մեկ պետական կենսաթոշակային հիմնադրամի մեջ: Սակայն նոր ձևավորված կառույցի շրջանակներում երկու հիմնադրամներն էլ ինքնավար են մնում կառավարման նոր կառուցվածքի շրջանակներում, և արդյունքում Կենսաթոշակային հիմնադրամը ներդրումներ է կատարում բացառապես արժեթղթերի և Նորվեգիայի, հարևան սկանդինավյան երկրների պետական պարտատոմսերի մեջ: Մինչդեռ Նավթային հիմնադրամը նախատեսված է ֆինանսավորելու երկրի տնտեսության հարմարեցումը հետնավթային դարաշրջանի իրողություններին[5]: Ներդրումները հիմնականում կատարվում են արտադրության, ֆինանսական և տեխնոլոգիական ոլորտներում[6]: Հիմնադրամը համալրվում է նավթի և գազի գործունեությունից ստացված հարկերով, նավթի և գազի արտահանումից ստացված եկամուտներով և այլն[7]: 2019 թ. շատ հաջող տարի էր հիմնադրամի համար, որը ստացավ 180 մլրդ ԱՄՆ դոլարի եկամուտ: 2020 թ. սկզբին միջոց-

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 18-19:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 15:

[3] Сумин А.М., Энергетическая политика Норвегии. Часть 2. Нефтегазовый сектор. Дихотомия норвежской энергетической политики. Российско-норвежское энергетическое сотрудничество // Актуальные проблемы нефти и газа. 2020. Вып. 1(28), статья 10, с. 15. https://doi.org/10.29222/ipng.2078-5712.2020-28.art10:

[4] Белякова М.Ю., Основные принципы функционирования суверенных фондов в России и Норвегии // Экономика: вчера, сегодня, завтра. 2016, том 6, № 12А, с. 326.

[5] Сумин А.М., Энергетическая политика Норвегии. Часть 2. Нефтегазовый сектор. Дихотомия норвежской энергетической политики. Российско-норвежское энергетическое сотрудничество // Актуальные проблемы нефти и газа. 2020. Вып. 1(28), статья 10, с.15. https://doi.org/10.29222/ipng.2078-5712.2020-28.art10

[6] Տե՛ս նույն տեղում, էջ 16:

[7] Белякова М.Ю., Основные принципы функционирования суверенных фондов в России и Норвегии // Экономика: вчера, сегодня, завтра. 2016, том 6, № 12А, с. 327.

ների ընդհանուր կապիտալն արդեն կազմում էր 1.1 տրիլիոն ԱՄՆ դոլար [1]:

Նավթից և գազից ստացված եկամուտները թույլ են տվել Նորվեգիային պահպանել բնակչության բարեկեցության բարձր մակարդակը: Նորվեգացիների 20 %-ը ստանում է տարբեր պետական նպաստներ՝ չհաշված թոշակները: ՀՆԱ-ի 4.3 %-ը բաժին էր ընկել նպաստներին: Միևնույն ժամանակ կրթությունն ու առողջապահությունը նույնպես անվճար են[2]: Նորվեգիայում ընկերությունների շահութահարկի դրույքաչափի նվազում է արձանագրվել (1990 թ.՝ 50.2 %, 2018-ին 23 %), մինչդեռ նավթագազային հատվածի ընդհանուր հարկային բեռը մնում էր բարձր՝ մոտ 78 %[3]:

2000-ական թվականների կեսերից հիմնադրամը հավատարիմ մնաց «էթիկական ներդրումներ» հասկացությանը՝ հրաժարվելով ներդրումներից այն հանքավայրերում, որոնց շահագործումը վնասակար է շրջակա միջավայրի համար: Նմանատիպ մոտեցում է կիրառվում էներգառեսուրսների սպառման հարցում (Էկոլոգիապես մաքուր էներգիայի աղբյուրների տեսակարար կշիռը կազմում է երկրի ընդհանուր էներգիայի սպառման 68 %-ը (տե՛ս աղյուսակ 1)) [4] :

*Աղյուսակ 1*

**Նորվեգիայում վառելիքի սպառումը ըստ վառելիքի տեսակի (մլն տոննա նավթային համարժեք)[5]**

| Անվանումը | 2008 | 2010 | 2012 | 2014 | 2016 | 2018 | 2018 (%, սպառում) |
|---|---|---|---|---|---|---|---|
| Նավթ | 10.2 | 10.6 | 10.5 | 10.0 | 9.9 | 10.4 | 22 |
| Բնական գազ | 3.7 | 3.5 | 3.4 | 3.7 | 3.8 | 3.9 | 8.3 |
| Քարածուխ | 0.7 | 0.8 | 0.8 | 0.9 | 0.8 | 0.8 | 1.7 |
| Հիդրոէներգետիկա | 31.5 | 26.4 | 32.1 | 30.6 | 32.2 | 31.3 | 66.1 |
| Վերականգնվող էներգիայի աղբյուրներ* | 0.3 | 0.3 | 0.4 | 0.6 | 0.5 | 0.9 | 1.9 |
| Ընդհանուրը | 46.4 | 41.6 | 47.2 | 45.8 | 47.2 | 47.4 | 100 |

Նշում՝ ներառում է հողմային, երկրաջերմային և արևային էներգետիկան, ինչպես նաև կենցաղային թափոններից ստացված էներգիան:

2017 թ. նոյեմբերին հիմնադրամը հայտարարեց իր նավթագազային բոլոր ակտիվները վաճառելու մտադրության մասին՝ դա հիմնավորելով ած-

[1] Сумин А.М., Энергетическая политика Норвегии. Часть 2. Нефтегазовый сектор. Дихотомия норвежской энергетической политики. Российско-норвежское энергетическое сотрудничество // Актуальные проблемы нефти и газа. 2020. Вып. 1(28), статья 10, с.16. https://doi.org/10.29222/ipng.2078-5712.2020-28.art10

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Кравчук А.А., Экономическая политика Норвегии в Арктике // Мировая экономика и международные отношения. 2020, т. 64, № 5, с. 105.

[5] Տե՛ս նույն տեղում:

խաջրածնային գների անկման պայմաններում ֆինանսական ռիսկերը նվազեցնելու անհրաժեշտությամբ[1]: Միևնույն ժամանակ Նորվեգիայի Պետական բանկի հիմնադրամը վերահսկող վարչության ղեկավարը հայտարարել էր, որ նման ռիսկերի դիվերսիֆիկացիան այս քայլի միակ նպատակն է: 2018 թ. օգոստոսին կառավարական հանձնաժողովը նշել էր, որ հիմնադրամը պետք է շարունակի ներդրումներ կատարել էներգետիկ ընկերություններում, քանի որ դրանից հրաժարվելը չի կարող դիտվել որպես ածխաջրածնային գների իջեցումից արդյունավետ ապահովագրվելու մեխանիզմ[2]: 2019 թ. հունիսին Նորվեգիայի խորհրդարանը քվեարկեց կրճատելու հիմնադրամի ներդրումները հանածո-վառելիքի տեսակներ արդյունահանող ընկերություններում՝ հօգուտ վերականգնվող էներգետիկայի ծրագրերում ներդրումների ավելացման: Մասնավորապես՝ նախատեսվում էր ավանդական վառելիք արտադրող ընկերությունների բաժնետոմսերից դուրս բերել ավելի քան 13 միլիարդ դոլար և մինչև 20 միլիարդ դոլար ներդնել էկոլոգիապես մաքուր ընկերությունների բիզնեսում[3]: Այդ որոշումը հակասական արձագանք էր գտել տեղական ձեռնարկությունների շրջանում: Մեկ այլ տեսակետի համաձայն՝ երկիրը պետք է աստիճանաբար նախապատրաստվի ածխաջրածնային պաշարների սպառմանը և դիվերսիֆիկացնի ներդրումային ռիսկերը, որպեսզի հիմնադրամի եկամուտներից շարունակի օգտվել երկրի բնակչությունը՝ տնտեսության այլ ոլորտներում ներդրումներից ստացված շահաբաժինների հաշվին[4]:

Սահմանվեց Նորվեգիայի տնտեսական զարգացման քաղաքականության նոր վեկտոր, որի հետևանքները սեփական և համաշխարհային էներգետիկ արդյունաբերության համար դեռ դժվար է կանխատեսել[5]: Միևնույն ժամանակ, ըստ միջազգային էներգետիկ գործակալության, ածխաջրածինների դարաշրջանը դեռ հեռու է ավարտված լինելուց, և տրանսպորտի էլեկտրաֆիկացման ներկայիս համաշխարհային միտումը միայն կհանգեցնի առաջիկա տասնամյակների ընթացքում նավթի պահանջարկի աճի տեմպի մի փոքր դանդաղեցման: Այդ առումով հիմնադրամի որոշումը կարծես արդարացված է մի քանի պատճառներով[6]: Նախ՝ այն միտված է երկրի հումքային տնտեսությունից նորարարական տնտեսության աստիճանական անցմանը, և դա շատ երկար գործընթաց է նույնիսկ ամուր ֆինանսական բարձի առկայության դեպքում: Ածխաջրածինների գների աճը՝ ներդրումների կրճատմամբ պայմանավորված, երկարաժամկետ հատվածում կարող է ձեռնտու լինել Նորվեգիայում նավթի և գազի արդյունաբերությանը: Ածխաջրածնային հումքի

---

[1] Տե՛ս նույն տեղում:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 105-106:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 106:

[5] Кравчук А.А., Экономическая политика Норвегии в Арктике // Мировая экономика и международные отношения. 2020, т. 64, № 5. с. 105.

[6] Տե՛ս նույն տեղում:

գների բարձրացման հետ մեկտեղ արկտիկական հանքավայրերի շահութաբերությունը Բարենցի ծովում կբարձրանա, որտեղ կենտրոնացված են երկրի չբացահայտված և/կամ հետախուզված ածխաջրածնային պաշարների մոտ 65 %-ը[1]:

Նորվեգական առանձնահատկությունը էներգետիկ անվտանգության հայեցակարգի քվազի-նորմատիվ համախմբումն է պաշտոնական փաստաթղթի տեսքով՝ այսպես կոչված «Սպիտակ գիրք» («Սպիտակ գիրք էներգետիկ քաղաքականության մասին – էներգիա հանուն փոփոխությունների - էներգետիկ քաղաքականությունը մինչև 2030 թվականը»), որը մշակվել էր Նորվեգիայի կառավարության կողմից պաշտոնական փաստաթղթի ձևաչափով: Ներկայացվել էր խորհրդարանի քննարկմանը և ֆորմալ կերպով համաձայնեցվել 2016-ի ապրիլին: Կառավարությունը առաջնորդվում էր ազգային էներգետիկ հաշվեկշռից հանածո վառելիքի հետագա դուրս մղմամբ՝ ամբողջովին էներգիայի վերականգնվող աղբյուրներին անցնելու նպատակով[2]:

2012 թ. մշակվել էր Այլընտրանքային էներգիայի զարգացման գործողությունների ազգային ծրագիրը (NREAP): Նպատակն է խթանել երկրի ներսում «կանաչ» էներգիայի սպառման արտադրությունն ու տարեկան աճը: Կառավարությունը կարծում է, որ ներկայումս հիդրոէներգետիկայի նշանակությունը ավելի է մեծանում՝ սկանդինավյան երկրների կողմից էներգիայի արտադրության համար հանածո վառելիքից աստիճանական հրաժարվելու ծրագրերի շնորհիվ [3]:

Մյուս կողմից՝ հիդրոէլեկտրակայանների աճը նպաստում է նաև հարակից ոլորտների աճին, և վերջիններս հանդես են գալիս որպես էներգիայի արտադրության հիմք: Հիդրոէներգետիկան երկրի էներգետիկ անվտանգության առանցքային տարրն է: Զարմանալի չէ, որ էներգետիկ քաղաքականությունն իրականացնելիս պետությունը ամեն կերպ վերահսկում է հիդրոէներգետիկան և փորձում կանխել օտարերկրյա ընկերությունների մուտքը այդ ոլորտ: Դա բացատրում է, թե ինչու նորվեգական շուկայում էլեկտրաէներգիա վաճառելու լիցենզիա են ստացել միայն մի քանի արտասահմանյան ընկերություններ, և մինչ օրս օտարերկրյա բաժնետերերի աննշան թիվ է նշվում նաև քամու էներգիայի արտադրության ոլորտում[4]:

---

[1] Տե՛ս նույն տեղում:

[2] Сумин А.М., Энергетическая политика Норвегии. Часть 1. Концепция энергетической безопасности // Актуальные проблемы нефти и газа. 2020. Вып. 1(28), статья 9, с. 2, 4-5. https://doi.org/10.29222/ipng.2078-5712.2020-28.art9

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 5:

[4] Сумин А.М., Энергетическая политика Норвегии. Часть 1. Концепция энергетической безопасности // Актуальные проблемы нефти и газа. 2020. Вып. 1(28), статья 9, с. 5. https://doi.org/10.29222/ipng.2078-5712.2020-28.art9

*Աղյուսակ 2*

**Նորվեգիայում նավթի, նավթամթերքի, գազի և էլեկտրաէներգիայի արտահանումը տարբեր տարիներին[1]**

| Ծածկագիր* | 1993 | 2003 | 2008 | 2013 | 2015 | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Նավթի, նավթամթերքի, գազի և էլեկտրաէներգիայի արտահանումը (մլրդ ԱՄՆ դոլար)** | | | | | | | | | | |
| 27 | 16.35 | 41.56 | 119.31 | 105.06 | 59.87 | 47.48 | 58.32 | 76.44 | 58.24 | 40.59 |
| 2709 | 12.59 | 29.02 | 66.87 | 49.72 | 25.06 | 22.83 | 25.87 | 32.98 | 29.31 | 22.74 |
| 2710 | 1.32 | 2.31 | 7.68 | 8.42 | 5.09 | 3.24 | 5.18 | 6.89 | 6.19 | 3.75 |
| 2711 | 2.29 | 9.97 | 43.55 | 46.10 | 29.14 | 20.69 | 26.49 | 35.50 | 22.14 | 13.75 |
| 2716 | 0.12 | 0.23 | 1.16 | 0.75 | 0.51 | 0.65 | 0.70 | 0.97 | 0.53 | 0.31 |
| Ապրանքների արտահանում | 31.90 | 67.94 | 173.22 | 155.35 | 103.79 | 89.63 | 101.98 | 123.04 | 104.03 | 82.67 |
| **Նավթի, նավթամթերքի, գազի և էլեկտրաէներգիայի արտահանման տեսակարար կշիռը ապրանքների արտահանման կառուցվածքում** | | | | | | | | | | |
| 27 | **51.3%** | **61.2%** | **68.9%** | **67.6%** | **57.7%** | **53.0%** | **57.2%** | **62.1%** | **56.0%** | **49.1%** |
| 2709 | 39.5% | 42.7% | 38.6% | 32.0% | 24.1% | 25.5% | 25.4% | 26.8% | 28.2% | 27.5% |
| 2710 | 4.1% | 3.4% | 4.4% | 5.4% | 4.9% | 3.6% | 5.1% | 5.6% | 6.0% | 4.5% |
| 2711 | 7.2% | 14.7% | 25.1% | 29.7% | 28.1% | 23.1% | 26.0% | 28.9% | 21.3% | 16.6% |
| 2716 | 0.4% | 0.3% | 0.7% | 0.5% | 0.5% | 0.7% | 0.7% | 0.8% | 0.5% | 0.4% |
| **էլեկտրաէներգիայի արտահանումը ֆիզիկական ծավալով արտահայտված (մլրդ կվտժ)** | | | | | | | | | | |
| 2716 | - | - | - | - | 22.02 | - | - | 18.5 | 12.3 | 25.0 |

*Նշում՝ Ապրանքային խումբ 27՝ Հանքային վառելիք, նավթ և նավթավերամշակման արտադրանք. բիտումային նյութեր. հանքային մոմեր: Ապրանքային դիրքի անվանումներ՝ 2709- Հում նավթ և հում նավթամթերքներ՝ ստացված բիտումային ապարներից, 2710- Նավթ և նավթամթերք (բենզին, մազութ, նավթ, դիզելային վառելիք, յուղ), 2711- Բնական և հեղուկ գազ, 2716-էլեկտրաէներգիա

Ի տարբերություն տարեցտարի ներքին էներգիայի շուկայում վերականգնվող էներգիայի աղբյուրների աճող օգտագործման՝ երկրում նավթի և բնական գազի սպառումը, որպես հիմնական էներգիայի պաշարներ, անընդհատ նվազում էր[2]: Հաշվի առնելով Նորվեգիայից ածխաջրածինների արտահանման ծավալները և նավթի և գազի արտահանումից եկամուտների դերը (տե՛ս աղյուսակ 2) երկրի տնտեսության մեջ՝ պարզ է դառնում, որ նավթն ու բնական գազը պահպանում են իրենց ավանդական դիրքերը էներգետիկ քաղաքականության մեջ[3]: Իսկ ինչ վերաբերում է էլեկտրաէներգիայի արտահանմանը, ապա 2015 թ. համեմատ 2020-ին զգալիորեն ավելացել էր Նորվե-

[1] United Nations (2021). UN Comtrade database, available at: https://comtrade.un.org/data/ (last accessed: September 27, 2021)

[2] Сумин А.М., Энергетическая политика Норвегии. Часть 2. Нефтегазовый сектор. Дихотомия норвежской энергетической политики. Российско-норвежское энергетическое сотрудничество // Актуальные проблемы нефти и газа. 2020. Вып. 1(28), статья 10, с. 1. https://doi.org/ 10.29222/ipng.2078-5712.2020-28.art10

[3] Տե՛ս նույն տեղում:

գիայից էլեկտրաէնէրգիայի արտահանումը՝ կազմելով 25.0 մլրդ կվտժ 22.02 մլրդ կվտժ-ի համեմատ: Մեկ միավորի արժեքը նվազել էր (տե՛ս աղյուսակ 2):

Նորվեգիայի հիդրոէներգետիկայի արդյունաբերության իրավական կարգավորման առանձնահատկություններից մեկը պետության կողմից ժամանակին տրված էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիաների նկատմամբ «հօգուտ իրեն տրված կանոն»-ի կիրարկումն է (անգլերեն՝ պետությանը վերադարձի իրավունք): Նորմը 1917 թվականից կիրառվում է մասնավոր ընկերություններին տրված այս տեսակի լիցենզիաների նկատմամբ[1]: Այս օրենսդրական դրույթի ուժով էլեկտրաէներգիայի արտադրության աղբյուրների նկատմամբ բոլոր իրավունքներն ավտոմատ կերպով անվճար փոխանցվում են պետությանը լիցենզիաների ժամկետը լրանալուց հետո: Արտադրության ժամանակ օգտագործված սարքավորումները կա՛մ վաճառվում են նորվեգական հանրային ընկերությանը, կա՛մ դառնում են պետության անմիջական սեփականությունը[2]:

Սկանդինավյան տարածաշրջանի պետությունները երկար ժամանակ համագործակցել են «NORDEL» կազմակերպության շրջանակներում էներգիայի արդյունավետ և հուսալի մատակարարման և ընդհանուր էներգետիկ ռեսուրսների օպտիմալ օգտագործման հասնելու համար (այն ներառում է Դանիայի, Ֆինլանդիայի, Նորվեգիայի և Շվեդիայի էներգահամակարգերը): Ստեղծվել է 1963 թվականին: Էլեկտրաէներգիայի ոլորտների բարեփոխման ընթացքում Նորվեգիան, Դանիան, Շվեդիան և Ֆինլանդիան ոչ միայն ստեղծեցին էլեկտրաէներգիայի ներքին շուկաներ, այլև դրանք միավորեցին՝ ստեղծելով սկանդինավյան երկրների համար էլեկտրաէներգիայի ընդհանուր շուկա[3]: 1993 թ. Նորվեգիայի էներգետիկ շուկայի հիման վրա ստեղծվեց աշխարհում առաջին միջազգային ապրանքային բորսան, որը մասնագիտանում էր էլեկտրաէներգիայի առևտրի ոլորտում՝ «Nord Pool»-ը: Այն ընգրկում է 3 ոլորտ՝ շուկայի կազմակերպում և առևտուր, հաշվարկների կատարում, մասնակիցներին տեղեկատվության տրամադրում[4]: «Nord Pool»-ը դարձավ էլեկտրաէներգիայի առաջին բորսան, որը միացրեց մի քանի երկրների շուկաները: Նորվեգական և շվեդական ընկերությունները կատարում են համակարգի օպերատորների գործառույթները: Յուրաքանչյուրին պատկանում է «Nord Pool»-ի բաժնետոմսերի 50 %-ը: Էլեկտրաէներգիայի ոլորտի

---

[1] Сумин А.М., Энергетическая политика Норвегии. Часть 1. Концепция энергетической безопасности // Актуальные проблемы нефти и газа. 2020. Вып. 1(28), статья 9, с. 5-6. https://doi.org/10.29222/ipng.2078-5712.2020-28.art9

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 6:

[3] Байдин В., Институциональные аспекты реструктуризации электроэнергетики в странах скандинавского региона // Вестник Института экономики Российской академии наук. 2008. Выпуск № 4, с. 295-304 [Электронный ресурс]. https://arxiv.gaugn.ru/s2073-64870000617-8-1-ru-935/ (дата обращения: 23.09.2021).

[4] Տե՛ս նույն տեղում:

բարեփոխումն ուղեկցվեց կարգավորիչ դաշտի փոփոխությամբ[1]: Դրա համար անհրաժեշտ էր մշակել ընդհանուր հայեցակարգ, որոշել սպառողներին էլեկտրաէներգիայի մատակարարման հուսալիության ապահովման համար մասնակիցների պատասխանատվության աստիճանը: Արդյունքնում Նորվեգիան ընդունեց էներգետիկայի մասին օրենքը, համաձայն որի՝ Ազգային էներգետիկ ընկերությունը վերածվեց հիմնական ազգային ցանցի՝ «Statnet»-ի (այն ծառայում էր որպես համակարգի օպերատոր), և արտադրական «Statkraft» ընկերությունն էր իր գործունեությունը ծավալում որպես արտադրող: Աստիճանաբար փոքր ընկերություններին թույլատրվեց մուտք գործել էլեկտրաէներգիայի շուկա: Սպառողներին տրվեց հնարավորություն՝ փոխելու մատակարարներին առանց լրացուցիչ ծախսերի, ինչն էլ նպաստեց մրցակցային հարաբերությունների զարգացմանը[2]: Նորվեգիան, ունենալով զարգացած հիդրոհամակարգ, տարվա մեծ մասը ուներ ցածր փոփոխական ծախսերով էլեկտրաէներգիայի ավելցուկ: Դա կարող էր արտահանվել հարակից երկրներ՝ գնային մրցունակության շնորհիվ: Էլեկտրաէներգիայի առևտուրը ընդլայնվեց Շվեդիայի և մայրցամաքային Եվրոպայի միջև՝ Բալթիկ ծովով: Առաջին փոխանցման գիծը՝ Բալթյան մալուխն էր Շվեդիայի և Գերմանիայի միջև, իսկ երկրորդ մալուխը՝ Շվեդիայի և Լեհաստանի միջև[3]: 2008 թ. Նորվեգիայից մինչև Նիդեռլանդներ ծովով մալուխ են տեղադրել, որը կարող է փոխանցել 700 մվտ էլեկտրաէներգիա: Նախագծման փուլում են գտնվում «Nord Sea Link» և «NORD LINK» նախագծերը, որոնք ենթադրում են Գերմանիա և Միացյալ Թագավորություն հիդրոէլեկտրակայանների արտադրած և քամուց ստացած էժան «խառնուրդ» կոչվող էլեկտրաէներգիայի արտահանում: Այն նախատեսում էր մրցունակ վաճառքի գին[4]:

Էներգետիկ նոր քաղաքականության մի մասը վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործման ընդլայնման համատեքստում է: Նպատակն է խթանել սովորական մեքենաներից էլեկտրական փոխադրամիջոցների անցումը: Նորվեգիան ներկայումս հանդիսանում է մեկ շնչի հաշվով էլեկտրամոբիլների քանակով համաշխարհային առաջատարներից մեկը: 2019 թ. Նորվեգիայում վաճառվող նոր մեքենաների կեսը կազմել են էլեկտրամոբիլները՝ այս ցուցանիշով արտադրողների համար հանդիսանալով չորրորդ ամենակարևոր շուկան ԱՄՆ-ից, Չինաստանից և Ճապոնիայից հետո: Էլեկտրամոբիլների պարկի աճը պայմանավորված է պետության ակտիվ աջակցությամբ, Նորվեգիայում բնակչության գնողունակության

---

[1] Տե՛ս նույն տեղում:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Сумин А.М., Энергетическая политика Норвегии. Часть 1. Концепция энергетической безопасности // Актуальные проблемы нефти и газа. 2020. Вып. 1(28), статья 9, с. 8. https://doi.org/10.29222/ipng.2078-5712.2020-28.art9

մակարդակով, էլեկտրամոբիլների սպասարկման ենթակառուցվածքների ստեղծումով ու սպասարկումով (հիմնականում լիցքավորման կայաններ)[1]:

1945 թվականից հետո «արդիականացնողների» ուժեղ և քաղաքականապես հզոր լոբբին ձեռք բերեց քաղաքական ուժ և պնդում էր, որ երկրի արդյունաբերական կառուցվածքի արդիականացման անհրաժեշտությունը դեպի «բարձր տեխնոլոգիական» արդյունաբերությունն է: Մի քանի տասնամյակ շարունակ հետազոտական լաբորատորիաներն ու ընտրված բարձր տեխնոլոգիական ընկերությունները, հատկապես ՏՀՏ ոլորտում, զգալի ֆինանսական և քաղաքական աջակցություն են ստացել կառավարությունից, և մի քանի կարևոր հայտնագործություններ են կատարվել ռազմական տեխնոլոգիաների, ծրագրային ապահովման (օրինակ՝ SIMULA լեզվի), համակարգչային տեխնիկայի և հեռահաղորդակցության ոլորտներում՝ ներառյալ բջջային հեռախոսակապի GSM համակարգը[2]: Սակայն համաշխարհային ՏՏ արդյունաբերության մեջ 1980-ական թթ. փոփոխությունները, ինչպիսիք են փոքր համակարգիչները, ինչպես նաև նորվեգացի քաղաքական գործիչների կողմից ավելի լիբերալ քաղաքական դիրքորոշման անցնելը հանգեցրին նորվեգական «բարձր տեխնոլոգիական» արդյունաբերության խարխլմանը: Արդյունքում պետական ծրագրերի շնորհիվ աջակցություն ստացող շատ ընկերություններ դուրս եկան բիզնեսից: Այսօր Նորվեգիայում դադարել է զանգվածային շուկայի համար ՏՀՏ ապրանքների արտադրությունը՝ ձախողելով «բարձր տեխնոլոգիաների» առաջատար դարձնելու փորձը[3]: Այս ամենը հանգեցրեց նրան, որ ձեռք բերված փորձը և հմտությունները իրենց օգտագործումը գտան հատկապես նավթի և գազի ծաղկող արդյունաբերության մեջ: Այդ ոլորտները բարձր տեխնոլոգիական ոլորտներով փոխարինելու ջանքները ավելի բարձրացրին դրանց համաշխարհային մրցունակությունը[4]:

Նորվեգիան ունի լավ աշխատող գիտակրթական համալիր, բիզնես կրթության բարձր մակարդակ, ինչը դրական է ազդում ՓՄՁ-ների նորարարական զարգացման վրա: ՓՄՁ-ները էական ազդեցություն ունեն պետության կողմից վարվող գիտական քաղաքականության վրա[5]: Հաշվի առնելով նավթի և գազի հանքավայրերի սպառման վտանգը՝ պետությունը որդեգրեց սոցիալ-տնտեսական զարգացման մի ռազմավարություն, որը հիմնված էր նորարարական բազայի ստեղծման վրա: Այսօր հետազոտական գործունեու-

---

[1] Сумин А.М., Энергетическая политика Норвегии. Часть 1. Концепция энергетической безопасности // Актуальные проблемы нефти и газа. 2020. Вып. 1(28), статья 9, с. 10-12. https://doi.org/10.29222/ipng.2078-5712.2020-28.art9

[2] Соколенко В.Э., Анализ опыта инновационного развития стран с ресурсной экономикой (на примере Норвегии) // Экономика: вчера, сегодня, завтра. 2017, том 7, № 10А, с. 95-96.

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 66:

[4] Տե՛ս նույն տեղում:

[5] Такмашева И.В., Тяглов С.Г., Инновационное развитие предпринимательского сектора: опыт скандинавских стран // Современная Европа. 2019, № 4 (90), с. 63.

թյան ֆինանսավորման առնվազն 40 %-ը բաժին է ընկնում պետությանը (հիմնականում ածխաջրածինների վաճառքից եկամուտների հաշվին): Բոլոր հետազոտությունների ավելի քան 50 %-ը հովանավորվում է մասնավոր հատվածի՝ նավթ և գազ արդյունահանող ոլորտի կողմից[1]:

Նորվեգիան նաև բավականին հաջող կարգավորման լուծումներ է առաջարկել կլաստերիզացիայի կտրվածքով[2]:

**Գիտական նորույթը:** Վերլուծելով Նորվեգիայի՝ նավթի և գազի արտահանումից ստացվող եկամուտներով պայմանավորված զարգացման ուղին, պետական քաղաքականությունը էներգետիկայի և մասնավորաբար էներգետիկ անվտանգության կտրվածքով՝ բացահայտվել և հիմնավորվել են ՀՀ-ում բնական պաշարների օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով օրենսդրական փոփոխության անհրաժեշտությունը, ինչպես նաև ՀՀ էներգետիկ անվտանգության քաղաքականության առաջնահերթությունը.

- հաշվի առնելով ՀՀ-ում բնական ռեսուրսների օգտագործման կարգը՝ հիմնավորվել և առաջարկվել է ՀՀ-ում կիրառել Նորվեգիյաի կողմից կիրավող նորմը և ոլորտի նկատմամբ վերահսկողության մոտեցումը
- հաշվի առնելով ՀՀ-ում էներգետիկ անվտանգության մակարդակի բարձրացման անհրաժեշտությունը՝ հիմնավորվել և առաջարկվել է ՀՀ-ում հէկերի դերակատարման բարձրացումը էներգետիկ համակարգում:

**Եզրակացություններ և գործնական առաջարկություններ:** Նորվեգիան հարուստ է բնական ռեսուրսներով, ինչը հնարավորություն է տվել երկրին դառնալու աշխարհում ամենազարգացած, բարձր մարդկային զարգացման մակարդակով երկներից մեկը: Նորվեգիան, գիտակցելով պաշարների սպառման վտանգը, ներդրումներ է կատարում տնտեսության այլ նորարարական ոլորտների զարգացման մեջ: Էներգետիկ անվտանգության տեսանկյունից մեծ ուշադրություն է դարձվում հիդրոէներգետիկայի զարգացմանը:

Կատարված ուսումնասիրությունները թույլ են տալիս կատարելու հետևյալ կիրառական առաջարկությունները.

1. ռեսուրսների շահագործմամբ զբաղվող նոր ընկերությունների հիմնման ժամանակ օրենսդրորեն ամրագրել պետության նվազագույն և առավելագույն մասնակցության չափը ձեռնարկության կանոնադրական կապիտալում՝ տարբերակված ըստ ոլորտների: Նմանատիպ մոտեցում ամրագրել օգտագործված սարքավորումների փոխանցման կարգի վերաբերյալ:

---

[1] Такмашева И.В., Тяглов С.Г., Инновационное развитие предпринимательского сектора: опыт скандинавских стран // Современная Европа. 2019, № 4 (90), с. 63, 65.

[2] Ковалева Т.К., Индустриальная политика, инновации, кластеры в Норвегии, государственное регулирование кластеризации // Инновации и Инвестиции. 2017, № 2, с. 69-71.

2. ՀՀ-ում էներգետիկ անվտանգության մակարդակի, ինչպես նաև էներգետիկ համակարգում հիդրոէներգետիկայի դերի բարձրացման համար, առաջարկվում է Շնող և Լոռի բերդ հէկերի նախագծում և կառուցում:

*Օգտագործված գրականության ցանկ*


1. Аналитический центр при правительстве российской федерации. Бюллетень о текущих тенденциях мировой экономики N 51: Норвегия: ресурсная модель экономического роста развитой страны, декабрь 2019 [Электронный ресурс]. https://ac.gov.ru/files/publication/a/26496.pdf (дата обращения: 27.09.2021)
2. Аристов Е.В., Социальность государства в Норвегии // Наука и образование: хозяйство и экономика; предпринимательство; право и управление. 2016, № 1 (68), с. 73-75
3. Байдин В., Институциональные аспекты реструктуризации электроэнергетики в странах скандинавского региона // Вестник Института экономики Российской академии наук. 2008. Выпуск №4, с. 294-304 [Электронный ресурс]. https://arxiv.gaugn.ru/s2073-64870000617-8-1-ru-935/ (дата обращения: 23.09.2021)
4. Беляев С.А., Модель экономического развития Норвегии как пример эффективного управления ресурсами страны // Региональный вестник. 2019, № 4 (19), с. 33-35
5. Белякова М.Ю., Основные принципы функционирования суверенных фондов в России и Норвегии // Экономика: вчера, сегодня, завтра. 2016, том 6, № 12А, с. 325-336
6. Ковалева Т.К., Индустриальная политика, инновации, кластеры в Норвегии, государственное регулирование кластеризации // Инновации и Инвестиции. 2017, № 2, с. 69-71
7. Кравчук А.А., Экономическая политика Норвегии в Арктике // Мировая экономика и международные отношения. 2020, т. 64, № 5, с. 101-108
8. Соколенко В.Э., Анализ опыта инновационного развития стран с ресурсной экономикой (на примере Норвегии) // Экономика: вчера, сегодня, завтра. 2017, том 7, № 10А, с. 89-98
9. Сумин А.М., Энергетическая политика Норвегии. Часть 1. Концепция энергетической безопасности // Актуальные проблемы нефти и газа. 2020. Вып. 1(28), с. 9. https://doi.org/10.29222/ipng.2078-5712.2020-28.art9
10. Сумин А.М., Энергетическая политика Норвегии. Часть 2. Нефтегазовый сектор. Дихотомия норвежской энергетической политики. Российско-норвежское энергетическое сотрудничество // Актуальные проблемы нефти и газа. 2020. Вып. 1(28), с. 10. https://doi.org/ 10.29222/ipng.2078-5712.2020-28.art10
11. Талагаева Д.А., Тращенко А.А., Роль нефтяных ресурсов Северного Моря в экономике Норвегии // Вестник МГИМО-Университета. 2015, № 4 (43), с. 263-270

12. Такмашева И.В., Тяглов С.Г., Инновационное развитие предпринимательского сектора: опыт скандинавских стран // Современная Европа. 2019, № 4 (90), с. 60-73
13. Nilsen, R. (2014). Rural modernisation as national development: The Norwegian case 1900–1950, Norsk Geografisk Tidsskrift - Norwegian Journal of Geography, 68:1, 50-58, DOI: 10.1080/00291951.2013.870598
14. United Nations (2021). UN Comtrade database, available at: https://comtrade.un.org/data/ (last accessed: September 27, 2021)

*References*

1. Analiticheskij centr pri pravitel'stve rossijskoj federacii. Bjulleten' o tekushhih tendencijah mirovoj jekonomiki N 51: Norvegija: resursnaja model' jekonomicheskogo rosta razvitoj strany, dekabr' 2019 [Jelektronnyj resurs]. https://ac.gov.ru/files/publication/a/26496.pdf (data obrashhenija: 27.09.2021)
2. Aristov E.V., Social'nost' gosudarstva v Norvegii // Nauka i obrazovanie: hozjajstvo i jekonomika; predprinimatel'stvo; pravo i upravlenie. 2016. # 1 (68). s. 73-75
3. Bajdin V., Institucional'nye aspekty restrukturizacii jelektrojenergetiki v stranah skandinavskogo regiona // Vestnik Instituta jekonomiki Rossijskoj akademii nauk. – 2008 – Vypusk #4, s. 294-304 [Jelektronnyj resurs]. https://arxiv.gaugn.ru/s2073-64870000617-8-1-ru-935/ (data obrashhenija: 23.09.2021).
4. Beljaev S.A., Model' jekonomicheskogo razvitija Norvegii kak primer jeffektivnogo upravlenija resursami strany // Regional'nyj vestnik. 2019. # 4 (19), s. 33-35
5. Beljakova M.Ju., Osnovnye principy funkcionirovanija suverennyh fondov v Rossii i Norvegii // Jekonomika: vchera, segodnja, zavtra. 2016, tom 6, # 12A, s. 325-336
6. Kovaleva T.K., Industrial'naja politika, innovacii, klastery v Norvegii, gosudarstvennoe regulirovanie klasterizacii // Innovacii i Investicii. 2017, # 2, s. 69-71
7. Kravchuk A.A., Jekonomicheskaja politika Norvegii v Arktike // Mirovaja jekonomika i mezhdunarodnye otnoshenija. 2020, t. 64, # 5, s. 101-108
8. Sokolenko V.Je., Analiz opyta innovacionnogo razvitija stran s resursnoj jekonomikoj (na primere Norvegii) // Jekonomika: vchera, segodnja, zavtra. 2017, tom 7, # 10A, s. 89-98
9. Sumin A.M., Jenergeticheskaja politika Norvegii. Chast' 1. Koncepcija jenergeticheskoj bezopasnosti // Aktual'nye problemy nefti i gaza. 2020. Vyp. 1(28), s. 9. https://doi.org/10.29222/ipng.2078-5712.2020-28.art9
10. Sumin A.M., Jenergeticheskaja politika Norvegii. Chast' 2. Neftegazovyj sektor. Dihotomija norvezhskoj jenergeticheskoj politiki. Rossijsko-norvezhskoe jenergeticheskoe sotrudnichestvo // Aktual'nye problemy nefti i gaza. 2020. Vyp. 1(28), s. 10. https://doi.org/ 10.29222/ipng.2078-5712.2020-28.art10
11. Talagaeva D.A., Trashhenko A.A., Rol' neftjanyh resursov Severnogo Morja v jekonomike Norvegii // Vestnik MGIMO Universiteta. 2015, # 4 (43), s. 263-270
12. Takmasheva I.V., Tjaglov S.G., Innovacionnoe razvitie predprinimatel'skogo sektora: opyt skandinavskih stran // Sovremennaja Evropa. 2019, # 4 (90), s. 60-73

13. Nilsen, R. (2014). Rural modernisation as national development: The Norwegian case 1900–1950, Norsk Geografisk Tidsskrift - Norwegian Journal of Geography, 68:1, 50-58, DOI: 10.1080/00291951.2013.870598
14. United Nations (2021). UN Comtrade database, available at: https://comtrade.un.org/data/ (last accessed: September 27, 2021)

## ՆՈՐՎԵԳԻԱՅԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

**ՍՏԵՓԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ**

***Համառոտագիր:*** Նորվեգիան աշխարհում զարգացման բարձր մակարդակ ունեցող երկներից մեկն է: Պաշարների սպառման վտանգը ստիպում է ներդրումներ կատարել տնտեսության նորարարական ոլորտների զարգացման մեջ: էներգետիկ ավտանգության տեսանկյունից Նորվեգիան օգտագործում է վերականգնվող էներգիայի աղբյուրները՝ հիդրոէներգետիկան:

Հոդվածի **նպատակն է՝** դիտարկելով Նորվեգիայի տնտեսական զարգացման ուղին, քաղաքականությունը արդյունահանող ընկերությունների նկատմամբ և էներգետիկ անվտանգության քաղաքականությունը՝ առաջարկել համապատասխան քայլեր ՀՀ էներգետիկ անվտանգության աստիճանի բարձրացման ուղղությամբ:

Նպատակին հասնելու համար դրվել են **հետևյալ խնդիրները՝**

- ներկայացնել նավթի և գազի արտահանումից ստացված միջոցների հաշվին Նորվեգիայի զարգացման ուղին, բնակչության կենսամակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումները և պետական քաղաքականությունը արդյունահանող ընկերությունների նկատմամբ,
- ներկայացնել Նորվեգիայի էներգետիկ անվտանգության քաղաքականությունը,
- առաջարկել ու հիմնավորել համապատասխան քայլեր ՀՀ-ում էներգետիկ անվտանգության բարձրացման ուղղությամբ:

Ուսումնասիրության հիմնական արդյունքների վերաբերյալ եզրահանգումներ կատարելիս կիրառվել են վերլուծական-սինթետիկ մեթոդները:

**Գիտական նորույթը:** Վերլուծելով Նորվեգիայի՝ նավթի և գազի արտահանումից ստացվող եկամուտներով պայմանավորված զարգացման ուղին, պետական քաղաքականությունը էներգետիկ անվտանգության կտրվածքով՝ բացահայտվել և հիմնավորվել են ՀՀ-ում բնական պաշարների օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու համար օրենսդրական փոփոխության անհրաժեշտությունը, ինչպես նաև ՀՀ էներգետիկ անվատանգության քաղաքականության առաջնահերթությունը.

- հաշվի առնելով ՀՀ-ում բնական ռեսուրսների օգտագորման կարգը՝ հիմնավորվել և առաջարկվել է ՀՀ-ում կիրառել Նորվեգիաի կողմից կիրավող նորմը և ոլորտի նկատմամբ վերահսկողության մոտեցումը,

- հաշվի առնելով ՀՀ-ում էներգետիկ անվտանգության մակարդակի բարձրացման անհրաժեշտությունը հիմնավորվել և առաջարկվել է ՀՀ-ում հէկերի դերի բարձրացումը էներգետիկ համակարգում:

Հոդվածում կատարված ուսումնասիրությունները թույլ են տալիս կատարելու ստորև բերվող **2 կիրառական առաջարկությունները՝** հիմք ընդունելով Նորվեգիայի փորձը և ՀՀ տնտեսության յուրահատկությունները.

1. օրենսդրորեն ամրագրել ռեսուրսների շահագործմամբ զբաղվող նոր ընկերությունների հիմնման ժամանակ պետության նվազագույն և առավելագույն մասնակցության չափը ձեռնարկության կանոնադրական կապիտալում՝ տարբերակված ըստ ոլորտների: Նմանատիպ մոտեցում ամրագրել օգտագործված սարքավորումների փոխանցման կարգի վերաբերյալ:
2. ՀՀ-ում էներգետիկ անվտանգության մակարդակի, ինչպես նաև էներգետիկ համակարգում հիդրոէներգետիկայի դերի բարձրացման նպատակով առաջարկվում է Շնող և Լոռի բերդ հէկերի նախագծում և կառուցում:

***Բանալի բառեր՝*** ածխաջրածիններ, տնտեսական զարգացում, հիմնադրամ, հիդրոէներգետիկա, էներգետիկ անվտանգություն, էներգիայի վերականգնվող աղբյուրներ, նորարարական զարգացում, Նորվեգիա

## ТЕНДЕНЦИИ ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ НОРВЕГИИ

**СТЕПАН ПАПИКЯН**

***Аннотация:*** Норвегия - одна из самых быстрорастущих стран мира. Риск истощения ресурсов заставляет вкладывать средства в развитие инновационных секторов экономики. С точки зрения энергетической безопасности Норвегия использует возобновляемые источники энергии - гидроэнергетику.

Цель данной статьи - предложить соответствующие шаги для повышения уровня энергетической безопасности в Армении с учетом пути экономического развития, политики Норвегии в области энергетической безопасности в отношении норвежских горнодобывающих компаний.

Для достижения цели были поставлены следующие задачи:

- представить путь развития Норвегии за счет экспорта нефти и газа, меры, направленные на повышение уровня жизни населения, государственную политику в отношении компаний, которые их производят;
- ознакомить с политикой Норвегии в области энергетической безопасности;
- предложить и обосновать соответствующие шаги по повышению энергетической безопасности в Армении.

Сделаны выводы об основных результатах исследования с помощью аналитико-синтетических методов.

**Научная новизна**. Анализируя путь Норвегии, страны, развивающейся за счет доходов от экспорта нефти и газа, была определена государственная политика в области энергетической безопасности, а также обоснована необходимость внесения изменений в законодательство для повышения эффективности использования при-

родных ресурсов в Армении, как приоритет политики энергетической безопасности Армении.

- Принимая во внимание порядок использования природных ресурсов в Республике Армения, было обосновано и было предложено применить норму, внедренную Норвегией, в Республике Армения и контрольный подход к сектору.
- Принимая во внимание необходимость повышения уровня энергетической безопасности в Республике Армения, было обосновано повысить роль гидроэлектростанций в энергосистеме Республики Армения.

Проведенные в данной статье исследования позволяют реализовать следующие 2 практические рекомендации, основанные на опыте Ноевегии:

1. законодательно закрепить максимальное участие в уставном капитале предприятия при учреждении новых компаний, занимающихся эксплуатацией ресурсов, дифференцированных по секторам. Установить аналогичный подход к процедуре передачи бывшего в употреблении оборудования.
2. В целях повышения уровня энергетической безопасности в Республике Армения, а также роли гидроэнергетики в энергосистеме предлагается построить ГЭС “Шнох” и “Лори берд” по проекту.

***Ключевые слова:*** углеводороды, экономическое развитие, фонд, гидроэнергетика, энергетическая безопасность, возобновляемые источники энергии, инновационное развитие, Норвегия

## NORWEGIAN ECONOMIC DEVELOPMENT TRENDS

**STEPAN PAPIKYAN**

***Abstract:*** Norway is one of the fastest growing countries in the world. The risk of depletion of resources forces us to invest in the development of innovative sectors of the economy. From the point of view of energy security, Norway uses renewable energy sources - hydropower.

The purpose of the article is to suggest appropriate steps to increase the level of energy security in Armenia, considering the path of economic development, the country's energy security policy towards the companies extracting Norwegian policy.

In order to achieve the goal, the following tasks have been set:

- Introduce the development path of Norway at the expense of oil and gas exports, measures aimed at raising the living standards of the population and state policy towards companies that produce it;
- Introduce Norway's energy security policy;
- Propose and substantiate appropriate steps to increase energy security in Armenia.

Analytical-synthetic methods were used to make conclusions about the main results of the study.

Scientific novelty. Analyzing the path based on Norway, a country developed at the expense of oil and gas export revenues, the state policy in terms of energy security was identified, the need for a legislative change to increase the efficiency of natural resources in Armenia was substantiated, as well as the priority of Armenia's energy security policy.

- Taking into account the procedure for the use of natural resources in the Republic of Armenia, it was substantiated and it was proposed to apply the norm implemented by Norway in the Republic of Armenia and the control approach to the sector.

- Taking into account the need to increase the level of energy security in the Republic of Armenia, it was substantiated it was proposed to increase the role of hydropower plants in the energy system in the Republic of Armenia.

The studies carried out in this article allow us to implement the following 2 practical recommendations, based on the experience of Norway Peculiarities of the RA economy.

1. To legislate the maximum participation in the statutory capital of the enterprise during the establishment of new companies engaged in the exploitation of resources, differentiated by sectors. Establish a similar approach to the procedure for transferring used equipment.
2. In order to increase the level of energy security in the Republic of Armenia, as well as the role of hydropower in the energy system, it is proposed to build “Shnogh” and “Lori berd” HPP design.

***Keywords:*** hydrocarbons, economic development, fund, hydropower, energy security, renewable energy, innovative development, Norway